## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 06.11.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 04.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն, ի դեմս ռեկտոր Գ. Գալստյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 06.11.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ չեղյալ ճանաչել Պայմանագրի 7.12-րդ կետի 2-րդ պարբերությունը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011011757
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան
ք. Երևան, Տերյան 105,
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 15100-01964940200
ՀՎՀՀ 01506385

Ռեկտոր՝

______________ Գ. Գալստյան
(ստորագրություն)

Կ.Տ.